Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի «Հուշակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կերպարվեստի -5 դ/ժ, երգ - երաժշտության -5 դ/ժ, տեխնոլոգիայի - 5 դ/ժ, ֆիզկուլտուրա - 22դ/ժ ուսուցիչների թափուր տեղերի համար:

Ուսուցչի վարձատրությունը՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1 /
2. Փաստաթուղթ՝ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.
3. Անձնագրի պատճեն
4. Ինքնակենսագրություն /Ձև 5/
5. Մեկ լուսանկար /3x4/ չափի
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք:
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2023թ. հոկտեմբերի 27-ին, ժամը՝ 14:00, Հուշակերտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 077-064-222 հեռախոսահամարով:

Արմավիրի մարզ գյուղ Հուշակերտ 3 փողոց շենք 1, էլ. հասցե hushakert@schools.am